

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

- Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 1810-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1810-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում, ամբողջ տեքստում և որոշմամբ հաստատված N1 և N2 հավելվածների վերնագրերում և ամբողջ տեքստում «տրանսպորտի և կապի» բառերը փոխարինել «տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերով.

2) որոշման N1 հավելվածի 8-րդ կետի «բ» ենթակետի «միջազգային հաղորդակցությունում» բառերը փոխարինել «ուղևորների և բեռների» բառերով,

3) որոշման N1 հավելվածի 8-րդ կետի «ժդ» և «ժե» ենթակետերը հանել,

4) որոշման N1 հավելվածի 8-րդ կետը լրացնել նոր «իզ»-ից մինչև «իզ» ենթակետերով՝

«իզ» ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների և երկաթուղու օտարման շերտի և պաշտպանական գոտիների օգտագործման ՀՀ օրենսդրությամբ սահմանված



պահանջների կատարման նկատմամբ, իր իրավասության սահմաններում վերահսկողության իրականացում.

իդ) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա փոխադրողների, բեռնա- ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցներում տեղադրվող հսկիչ սարքերի՝ թվային տախոգրաֆների կահավորմանը և շահագործմանը, քարտերի շահագործմանը և ստուգաչափմանը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով ներկայացվող պահանջների կատարման նկատմամբ իր իրավասության սահմաններում վերահսկողության իրականացում.

իե) իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից միջազգային հաղորդակցությունում բեռնաուղևորափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների կշռային հարաչափերի(կշռային պարամետրերի) նկատմամբ ներկայացվող պահանջների կատարման նկատմամբ իր իրավասության սահմաններում վերահսկողության իրականացում.

իզ) իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների համար նախատեսված տոմսերի վաճառքի գործընթացի կազմակերպման և իրացման ընթացքի նկատմամբ իր իրավասության սահմաններում վերահսկողության իրականացում:>>:

5) որոշման N1 հավելվածի 12-րդ կետը <<է>>, <<ժ>>, <<ժա>> ենթակետերից, 15-րդ կետից և 16-րդ կետից հանել <<և տարածքային մարմինների>> բառերը:

6) որոշման N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության բաժինը կարող է ունենալ առնվազն 3 հաստիքային միավոր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:



Հավելված  
ՀՀ կառավարության 2017 թվականի  
\_\_\_\_\_ թիվ \_\_\_\_\_ որոշման

«Հավելված N2  
ՀՀ կառավարության 2002 թվականի  
նոյեմբերի 21-ի N1810-Ն որոշման

## Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

#### I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Վերահսկողության և ստուգումների բաժին
2. Տեխնիկական վերահսկողության բաժին
3. Հաշվառման և դիտարկումների բաժին>>:





**ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1810-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունելու կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին**

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1810-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում ավելացում կամ նվազեցում, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի առաջացնում

**Ց Ա Ն Կ**

**ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1810-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի հեղինակների**

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1810-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1810-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին**

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1810-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

